# ՕԾՎԵՑ ՎՈԼԳՈԳՐԱԴԻ Ս. ԳԵՎՈՐԳ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 27-ին՝ Ս. Գևորգի տոնին, Վոլգոգրադում օծվեց Ս. Գևորգ նորակառույց եկեղեցին՝ ձեռամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանի, մասնակցությամբ Տ. Մուշեղ աբեղա Բաբայանի և Վոլգոգրադի հոգևոր հովիվ Տ. Մաղաքիա քհն. Օհանյանի:

Օծման արարողությանը ներկա էին Վոլգոգրադի Ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներ, Վոլգոգրադի Կաթոլիկ եկեղեցու հոգևոր հովիվը, տեղի մուսուլմանների հոգևոր առաջնորդը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, Ռուսաստանի տարբեր համայնքների ներկայացուցիչներ և բազմահազար հայորդիներ:

Եկեղեցին կառուցվել է 2000-2003 թթ., Ռուդոլֆ Գևորգովի և Հրաչիկ Պողոսյանի անմիջական նախաձեռնությամբ ու հայ համայնքի ջանքերով: Եկեղեցու ճարտարապետն է Վ. Օհանյանը:

Շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով՝ առաջնորդ Սրբազան Հայրն իր խոսքում նշեց, որ հերոս քաղաք Վոլգոգրադում կառուցված հայ եկեղեցին իր զավակների նվիրումի և սիրո արտահայտությունն է առ Բարձրյալն Աստված, Առաքելական Մայր Եկեղեցին և Սրբազան Հայրենիքը: Սրբազան Հայրը միաժամանակ նշեց, որ Վոլգոգրադում վեր խոյացած հայկական եկեղեցին հայ և ռուս ժողովուրդների բարեկամության հաստատումն է նաև:

Շնորհավորական խոսքով հանդես եկան նաև Ռուս Ուղափառ եկեղեցու ներկայացուցիչը, կաթոլիկ և մուսուլման հոգևորականները, տեղի ուղղափառ համալսարանի ռեկտորը, մարզային ու քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Օծման արարողությունից հետո եկեղեցու բակում բաժանվեց մատաղ:

*ԴԻՎԱՆ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ*
*ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ*